ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

ВОПРОСЫ ИСТОРИИ КПСС
№ 4, 1967

Ամսագրի «Դեպի մեծ Հոկտեմբերի 50-ամյակը» բաժնում տպագրված են Ս. Ա. Արտեմևի «Սովետների հանրապետության դաղափարի զարդացումը Վ. Ի. Լենինի ապրիլյան թեզիսներում», Վ. Մ. Շապկոյի «Վ. Ի. Լենինը և դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների հաստատումը պետական շինարարության մեջ», Վ. Մ. Վոդոլագինի «Հոկտեմբերյան զինված ապստամբությունը պատմա-կուսակցական գրականության մեջ սովետական իշխանության առաջին տասնամյակում», Ֆ. Պ. Բիստրիխի «Ուրալի բոլշևիկները մասսաների ղեկավար՝ սովետների իշխանության համար մղվող պայքարի ժամանակաշրջանում» հոդվածները։ Ս. Ա. Արտեմևի «Սովետների հանրապետության դաղափարի զարդացումը Վ. Ի. Լենինի ապրիլյան թեզիսներում» հոդվածում հեղինակը նշում է, որ Վ. Ի. Լենինի ապրիլյան թեզիսները բացառիկ կարևոր դեր խաղացին Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման գործում։ Այդ թեզիսներում Վ. Ի. Լենինը հանճարեղորեն հիմնավորեց սովետների հանրապետության դաղափարը, որպես պետության քաղաքական ձևի՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում։ Լենինի այդ եզրահանդումը մի նոր աստիճանի բարձրացրեց պետության մասին մարքսյան ուսմունքը։

Վ. Մ. Շապկոն իր «Վ. Ի. Լենինը և դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների հաստատումը պետական շինարարության մեջ» հոդվածում լուսաբանում է Վ. Ի. Լենինի տեսական դրույթները պետական շինարարության մեջ դեմոկրատական ցենտրալիզմի մասին և սովետական իշխանության առաջին տարիներին այդ ըսկզբունքների իրականացման գործում մի շարք միջոցառումները։

Վ. Մ. Վոդոլագինի վերոհիշյալ հոդվածը նվիրված է Հոկտեմբերյան զինված ապստամբության վերաբերյալ պատմագրությանը։

Ամսագիրը ունի «Հաղորդումներ», «Կոնսուլտացիա», «Նամակներ և թղթակցություններ», «Հիշողություններ», «Քննադատություն և բիբլիոգրաֆիա», «Գիտական կյանք» բաժինները, որտեղ հրապարակված են հետաքրքիր նյութեր։

КОММУНИСТ
№ 6, № 7, 1967

Ամսագրի 6-րդ համարը սկսվում է «Լենինիզմի գրոշի ներքո» առաջնորդողով, որը նվիրված է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակի նախապատրաստմանը։

«Դեպի Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 50-ամյակը» բաժնում տպագրված են Ս. Կնյազևի, Դ. Կոկինի «Վ. Ի. Լենինի ապրիլյան թեզիսները», Դ. Կունաևի «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ազգային ծայրամասերի վերափոխումը» հոդվածները։ Ամսագիրն ունի «Լենինիզմը և աշխարհի գիտական ճանաչողությունը», «Էկոնոմիկական տեսությունը և տնտեսական փորձը», «Սոցիալիզմի երկրներում» և այլ բաժիններ, որտեղ տպագրված են մի շարք հետաքրքիր հոդվածներ նվիրված սուբյեկտի և օբյեկտի դիալեկտիկայի լենինյան հասկացությանը, կառավարման լենինյան սկզբունքների իրականացմանը, տնտեսական օրենքներին և այլ հարցերին։

Ամսագրի 7-րդ համարում տպագրված նյութերից ուշադրություն են գրավում Գ. Կուրանովի «Մեծ Հոկտեմբերը և աշխատավորների միջազգային համերաշխությունը», «Ժողովրդական վերահսկողությունը գործողության մեջ» և այլ հոդվածներ։

ВОПРОСЫ ФИЛОСОФИИ
№ 4, 1967

Ամսագիրը բացվում է «Լենինիզմը, Հոկտեմբերը, արդիականությունը» առաջնորդողով։ «Դեպի Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակը» բաժնում տպագրված են Վ. Մ. Մեժուևի «Սոցիալիստական կուլտուրայի լենինյան տեսությունը», Ա. Ֆ. Շիշկինի «Սոցիալական դետերմինիզմի և բարոյականության պրոբլեմը Վ. Ի. Լենինի աշխատություններում», Ի. Ի. Ջերկասովի «Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությունը ԱՄՆ-ի փիլիսոփայական մտքի վրա» հոդվածները։

«Սոցիալական դետերմինիզմի և բարոյականության պրոբլեմը Վ. Ի. Լենինի աշխատություններում» հոդվածում նոր եզրահանդումների միջոցով լուսաբանված են այնպիսի հարցեր,

ինչպիսին են՝ դետերմինիզմը և կամքի ազատությունը, հասարակական առաջադիմությունը և բարոյականությունը, նոր հասարակության համար պայքարում մասսաների բարոյական դիտակցության դերը և այլն։

«Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությունը ԱՄՆ-ի փիլիսոփայական մտքի վրա» հոդվածի հեղինակ, ՍՍՀՄ ԳԱ փիլիսոփայության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ի. Ջերկասովը նշում է, որ ԱՄՆ-ում մարքսիստական փիլիսոփայության պատմության հետազոտությունը ցույց է տալիս, որ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը հանդիսացավ համաշխարհային պատմական հսկայական դարձան ԱՄՆ-ում և աշխարհի մյուս երկրներում մարքսյան փիլիսոփայության մտքի արագ զարգացման համար։ Ամերիկյան մարքսիստները չափազանց դժվար պայմաններում հերոսաբար պայքարում են կոմունիստական լուսավոր ապագայի համար։

Ամսագրի «Լենինյան արտացոլման տեսության ակտուալ պրոբլեմը» բաժնում տպագրված են Վ. Ա. Լեկտորսկու «Օբյեկտի վերարտադրման սկզբունքները գիտակցության մեջ», Ա. Դ. Ալեքսանդրովի «Ճշմարտություն և մոլորություն», Տ. Ռ. Օյզերմանի «Փիլիսոփայությունը և առօրեական գիտակցությունը» և այլ հոդվածներ։

Ամսագիրն ունի «Գիտական կյանք», «Քննադատություն և դրախոսություն», «Փիլիսոփայություն արտասահմանում» բաժինները։

ВОПРОСЫ ИСТОРИИ
№ 4, 1967

Ամսագրի ապրիլյան համարում զետեղված են Գ. Ն. Գոլիկովի, Յու. Ս. Տոկարևի «Վ. Ի. Լենինի ապրիլյան թեզիսների ուսումնասիրության շուրջը», Գ. Լ. Մարյախինի «Հարկային քաղաքականության հիմնական էտապները ՍՍՀՄ-ում», Ն. Ա. Սիմոնյանի «Արևելքի երկրների հեղափոխություններում «ազգային սոցիալիզմների» դերի մասին», Մ. Ա. Բարդի, Ս. Դ. Սկազկինի «Միջնադարյան դյուղացիության պատմությունը Եվրոպայում և նրա մշակման սկզբունքները» հոդվածները։

Հետաքրքիր նյութեր են տպագրված նաև ամսագրի «Վիճաբանություն և քննարկում», «Հիշողություններ», «Պատմագրություն ՍՍՀՄ-ում», «Պատմագրություն արտասահմանում», «Գրախոսություն», «Փաստեր, իրադարձություններ, մարդիկ» բաժիններում։